



Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

**Քննական առարկա 3
Իրավագիտության հիմունքներ**

Քննաթերթ-պատասխաններ

Հուլիս, 2023թ.

ԲԱԺԻՆ Ա. Պատասխաններ

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1	գ
2	բ
3	դ
4	դ
5	ա
6	դ
7	գ
8	դ
9	գ
10	ա
11	գ
12	դ
13	ա
14	ա
15	ա
16	դ
17	ա
18	դ
19	ա
20	բ
21	ա
22	ա
23	դ
24	ա
25	դ

Ընդամենը՝ 50 միավոր

Հարցը, պատասխանի ճիշտ տարբերակը և իրավական հիմքը.

26. Ովքե՞ր կարող են հանդես գալ որպես վարձույթի պայմանագրի կողմեր

գ) Վարձույթի պայմանագրի կողմ որպես վարձատու կարող են հանդես գալ միայն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձինք, իսկ որպես վարձակալ՝ քաղաքացիական իրավունքի ցանկացած սուբյեկտ.

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 629-րդ հոդվածի 1-ին մաս

Վարձույթի պայմանագրով, որպես մշտական ձեռնարկատիրական գործունեություն, գույքը վարձակալության հանձնող վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել շարժական գույք:

27. Պայմանագրով այլ կարգավորում սահմանված չլինելու դեպքում վարձակալած գույքի օգտագործման արդյունքում վարձակալի ստացած պտուղները, արտադրանքը և եկամուտները հանդիսանում են.

բ) Վարձակալի սեփականությունը.

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 607-րդ հոդվածի 1-ին մաս

Վարձակալած գույքի օգտագործման արդյունքում վարձակալի ստացած պտուղները, արտադրանքը և եկամուտները նրա սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

28. Ինչպե՞ս է կնքվում անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը

դ) գրավոր, մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, ինչպես նաև ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները պետական գրանցման:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 610-րդ հոդվածի 2-րդ մաս

Վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր: Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611-րդ հոդված

Անշարժ գույքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

29. Առևտրային կազմակերպություններն ստեղծվում են

դ) տնտեսական ընկերությունների ձևով

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մաս.

Առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով:

30. Միացման եղանակով իրավաբանական անձի վերակառուցման դեպքում դրանցից առաջինը համարվում է վերակառուցված

ա) պետական ռեգիստրում իրավաբանական անձի դադարումը գրանցելու պահից

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 4-րդ մաս.

Իրավաբանական անձն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս նրանք համարվում են վերակազմակերպված՝ միացած իրավաբանական անձի գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից:

31. Իրավաբանական անձը կարող է լուծարվել

դ) հիմնադիրների կամ դատարանի որոշմամբ

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մաս.

2. Իրավաբանական անձը կարող է լուծարվել՝

1) նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշմամբ՝ ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով ստեղծվել է իրավաբանական անձը, կամ այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար նա ստեղծվել է.

2) դատարանի կողմից իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օրենքի խախտումների հետ.

3) դատարանի վճռով՝ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու, օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների, հասարակական միավորման կամ հիմնադրամի կողմից պարբերաբար իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն իրականացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

32. Իրավաբանական անձի լուծարման դեպքում առաջին հերթին բավարարվում են

գ) լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պահանջները

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մաս.

1. Իրավաբանական անձի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝ առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները.

33. Իրավաբանական անձանց թվին, որոնց նկատմամբ մասնակիցներն ունեն պարտավորական իրավունքներ՝ դասվում են

դ) տնտեսական ընկերությունները

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մաս.

Իրավաբանական անձանց թվին, որոնց նկատմամբ նրանց հիմնադիրները (մասնակիցները) ունեն պարտավորական իրավունքներ, պատկանում են տնտեսական ընկերակցությունները և ընկերությունները:

34. Ինչպե՞ս են կարգավորվում վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետները, եթե պայմանագրով դրանք որոշված չեն

գ) կիրառվում են նույնանման գույքի վարձակալության ժամանակ համեմատելի հանգամանքներում սովորաբար գործող կարգը, պայմանները և ժամկետները.

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 616-րդ հոդվածի 1-ին մաս.

Վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետները որոշվում են վարձակալության պայմանագրով: Եթե պայմանագրով դրանք որոշված չեն, ապա կիրառվում են նույնանման գույքի վարձակալության ժամանակ համեմատելի հանգամանքներում սովորաբար գործող կարգը, պայմանները և ժամկետները:

35. Այն դեպքում, երբ ապրանք ստացած գնորդն առուվաճառքի պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարում դրա համար, վաճառողն իրավունք ունի պահանջել

ա) պահանջել վճարելու հանձնված ապրանքի համար կամ վերադարձնելու չվճարված ապրանքը.

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 504-րդ հոդվածի 4-րդ մաս.

Այն դեպքում, երբ ապրանք ստացած գնորդն առուվաճառքի պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարում դրա համար, վաճառողն իրավունք ունի պահանջել վճարելու հանձնված ապրանքի համար կամ վերադարձնելու չվճարված ապրանքը:

36. Պայմանագրով այլ կարգավորում սահմանված չլինելու դեպքում ու՛մ են պատկանում վարձակալած գույքի բաժանելի բարելավումները.

գ) Վարձակալած գույքից վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 626-րդ հոդվածի 1-ին մաս.

Վարձակալած գույքից վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով:

37. Ստորև նշված հիմքերից ո՞րը չի համարվում վստահություն կորցնելու հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման հիմք.

դ) գործատուն այլևս չի վստահում աշխատողին.

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդված.

Գործատուն իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝

1) կատարել է այնպիսի արարք, որի հետևանքով գործատուն կրել է կամ կարող էր կրել նյութական վնաս.

2) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք.

3) հրապարակել է պետական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը,

4) չի պահպանել (խախտել է) աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքների կազմակերպման և իրականացման կանոնների, հրահանգների պահանջները, որն առաջացրել է կամ կարող էր առաջացնել ծանր հետևանքներ՝ վտանգելով անձանց կյանքն ու առողջությունը կամ իրական սպառնալիք ստեղծելով անձանց կյանքի և առողջության համար կամ նրանց կյանքին ու առողջությանը պատճառելով վնաս.

5) անօրինական (առանց համաձայնեցման կամ տեղեկացման) օգտագործել է գործատուի կամ այլ աշխատողների համակարգչային տեխնիկան կամ տեղեկատվական համակարգերը (տեղեկատվական համակարգեր մուտք գործելու միջոցներ (մուտքանուն, գաղտնաբառ և այլն)), որի միջոցով ձեռք է բերել աշխատանքային կամ անձնական տվյալներ, իրականացրել է տվյալների անօրինական օգտագործում, ձայնագրում, ոչնչացում, վերափոխում, ուղեփակում, կրկնօրինակում, տարածում կամ թվային տեխնոլոգիաների միջամտությամբ իրականացրել է գործողություններ, այդ թվում՝ վիրուսային կամ ծրագրային կարգաբերումներ, որոնք կարող էին խաթարել կամ խաթարել են գործատուի բնականոն աշխատանքը:»:

38. Աշխատողի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով աշխատանքային պայմանագիրը Գործատուն կարող է լուծել, եթե

ա) մինչև տվյալ աշխատանքային կարգապահական խախտումը աշխատանքային կարգապահական խախտում թույլ տված աշխատողն ունի առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ.

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 121-րդ հոդված.

Գործատուն իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե մինչև տվյալ աշխատանքային կարգապահական խախտումը աշխատանքային կարգապահական

խախտում թույլ տված աշխատողն ունի առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ:

39. Աշխատողի առողջական վիճակի վատթարացումը կարող է պատճառ դառնալ աշխատանքային պայմանագրի լուծման համար, եթե

ա) այն կրում է կայուն բնույթ և խոչընդոտում է շարունակելու աշխատանքը կամ բացառում է այն շարունակելու հնարավորությունը.

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 120-րդ հոդվածի 2-րդ մաս.

2. Աշխատողի առողջական վիճակի վատթարացումը կարող է պատճառ դառնալ աշխատանքային պայմանագրի լուծման համար, եթե այն կրում է կայուն բնույթ և խոչընդոտում է շարունակելու աշխատանքը կամ բացառում է այն շարունակելու հնարավորությունը:

40. Հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են.

ա) աշխատանքային օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ.

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս.

Հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

41. Ստորև բերվածներից ո՞րը չի համարվում Գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծման արգելքն ընդգրկող ժամանակահատված.

դ) աշխատողի՝ առկա համակարգով ուսումնառության և փորձաշրջանի մեջ գտնվելու ժամանակահատվածում.

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մաս.

1. Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է՝

1) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերի.

2) աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում.

2.1) հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը.

2.2) երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ կետերով նախատեսված դեպքերի.

3) գործադուլ հայտարարելու մասին որոշումն ընդունելուց հետո և գործադուլի ընթացքում, եթե աշխատողն այդ գործադուլին մասնակցում է սույն օրենսգրքով սահմանված կարգով.

4) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աշխատողի վրա դրված պարտականությունների կատարման ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի.

5) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, եթե, այդ դեպքերով պայմանավորված, աշխատողը չի ներկայացել աշխատանքի.

6) ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների չպլանավորված տեղափոխման կամ չպլանավորված տրամադրման ժամանակահատվածում, եթե մինչև տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով աշխատողը չի ներկայացել աշխատանքի:

42. Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են.

ա) աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով.

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մաս.

Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր

աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

43. Ստորև թվարկվածներից ո՞րը ՉԻ համարվում աշխատանքի էական պայման՝

դ) Փորձաշրջանի տևողությունը և պայմանները.

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մաս.

Աշխատանքի էական պայմաններ են աշխատանքի վայրը, աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը, արտոնությունները, աշխատաժամանակի (աշխատանքի և հանգստի) ռեժիմը, տարակարգերը և պաշտոնների անվանումները, գործառույթները, աշխատանքային պայմանագրի տեսակը, որոնց և (կամ) գործատուի փոփոխման դեպքում գործատուն աշխատողին պետք է ծանուցի սույն օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված ժամկետներում

44. Ստորև բերված հիմքերից ո՞րը ՉԻ համարվում Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմք.

ա) աշխատողի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում.

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մաս.

1. Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

1) կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման և օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու) դեպքում.

2) արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.

3) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում.

4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.

5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում.

6) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում.

7) աշխատողի երկարամյակ անաշխատունակության հետևանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով)։

8) աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու դեպքում։

9) անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում։

10) պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում։

11) տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող աշխատողի վաթսուներեք տարին, իսկ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող աշխատողի վաթսուներեք տարին լրանալու դեպքում, եթե համապատասխան հիմքը նախատեսված է աշխատանքային պայմանագրով։

12) օտարերկրացու կացության կարգավիճակն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու դեպքում։

13) սույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքում աշխատանքի չթույլատրվելու հետևանքով ավելի քան 10 աշխատանքային օր (հերթափոխ) անընդմեջ կամ վերջին երեք ամսվա ընթացքում ավելի քան 20 աշխատանքային օր (հերթափոխ) աշխատողի՝ իր աշխատանքային պարտականությունները չկատարելու դեպքում։

45. Նշվածներին ո՞րը Չ համարվում վարչարարության սկզբունք:

բ) տնօրինչականությունը

Հիմք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 4-42-րդ հոդվածներ

Հոդված 4. Վարչարարության օրինականությունը

1. Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը։
2. Վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով։

Հոդված 5. Ձևական պահանջները չարաշահելու արգելքը

Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե

նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Հոդված 6. Հայեցողական լիազորությունները սահմանափակելը

1. Հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:

2. Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

Հոդված 7. Կամայականության արգելքը

1. Վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էպես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

2. Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:

Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում:

Հոդված 8. Վարչարարության համաչափությունը

Վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Հոդված 9. Առավելագույնի սկզբունքը

1. Վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում:

2. Եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա վերջիններս այլևս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով:

3. Եթե վարչական մարմինների կողմից անձանց տրված թույլտվությունները բովանդակային առումով ներառում են այլ թույլտվություններ, ապա դրանք նույնպես համարվում են տրված:

(9-րդ հոդվածը լրաց. 13.12.04 ՀՕ-10-Ն)

Հոդված 10. Հավաստիության կանխավարկածը

1. Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

2. Անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:

Հոդված 11. Տնտեսավարությունը

Վարչական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել սեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը:

46. Որո՞նք են անվավեր և առ ոչինչ վարչական ակտերի միջև առկա հիմնական տարբերությունները.

ա) **առ ոչինչ վարչական ակտերը կայացվում են օրենսդրության դրույթների կոպիտ և ակնհայտ խախտումներով, իսկ անվավեր վարչական ակտերը ենթադրում են օրենսդրական դրույթների ոչ ակնհայտ, այլ վիճարկվող խախտումներ.**

Հիմք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 62-63-րդ հոդվածներ

1. Առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

ա) ակտից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել.

բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը.

գ) ակտից պարզ չէ, թե դա որոշակիորեն ում է հասցեագրված, կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում.

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

1. Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում.

գ) շահերի բախման իրավիճակում:

47. Եթե մատակարարման պայմանագրով ապրանքների ընտրության ժամկետ նախատեսված չէ, գնորդը (ստացողը) ապրանքների ընտրությունը պետք է կատարի

ա) ապրանքները պատրաստ լինելու մասին մատակարարի ծանուցումն ստանալուց հետո՝ ողջամիտ ժամկետում

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 525-րդ հոդվածի 3-րդ մաս

Եթե ապրանքների ընտրության ժամկետ պայմանագրով նախատեսված չէ, գնորդը (ստացողը) ապրանքների ընտրությունը պետք է կատարի ապրանքները պատրաստ լինելու մասին մատակարարի ծանուցումն ստանալուց հետո՝ ողջամիտ ժամկետում:

48. Ո՞ր պայմանների դեպքում է ապրանքը համարվում է գնորդի տնօրինությանը հանձնված.

դ) եթե պայմանագրով նախատեսված ժամկետում, պատշաճ վայրում, ապրանքը պատրաստ է հանձնելու, եւ գնորդը, պայմանագրի պայմանների համաձայն, ծանուցված է հանձնելու համար ապրանքը պատրաստ լինելու մասին

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 474-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ

Եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով, ապրանքը գնորդին հանձնելու վաճառողի պարտականությունը համարվում է կատարված այն պահին, երբ՝

2) ապրանքը հանձնվում է գնորդի տնօրինությանը, եթե այն պետք է գնորդին կամ նրա նշած անձին հանձնվի ապրանքի գտնվելու վայրում: Ապրանքը համարվում է գնորդի տնօրինությանը հանձնված, եթե պայմանագրով նախատեսված ժամկետում, պատշաճ վայրում, ապրանքը պատրաստ է հանձնելու, և գնորդը, պայմանագրի պայմանների համաձայն, ծանուցված է հանձնելու համար ապրանքը պատրաստ լինելու մասին:

49. Իրավունք ունի՞ վարձակալը վարձակալած գույքը հանձնել ենթավարձակալության

ա) Վարձակալն ունի նման իրավունք միայն վարձատուի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածի 1-ին մաս

Վարձակալն իրավունք ունի վարձակալած գույքը հանձնել ենթավարձակալության միայն վարձատուի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով:

50. Վարձակալի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե վարձակալը՝

դ) 1-ին կամ 2-րդ կետերով նախատեսված հիմքերով:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 623-րդ հոդվածի 1-ին մաս

Վարձակալության պայմանագիրը, վարձակալի պահանջով, դատարանով կարող է վաղաժամկետ լուծվել, եթե՝

1) վարձատուն վարձակալի օգտագործմանը չի տրամադրել գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել գույքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար.

2) վարձակալին հանձնված գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել վարձակալին, և վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս, գույքը զննելիս կամ դրա սարքինությունն ստուգելիս.

3) վարձատուն վարձակալության պայմանագրով սահմանված ժամկետներում, իսկ պայմանագրում դրանց բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում, չի կատարել գույքի հիմնական վերանորոգման իր պարտականությունը.

4) հանգամանքների բերումով, որոնց համար վարձակալը պատասխանատու չէ, գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

ԲԱԺԻՆ Բ. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Խնդիր 1. /12 միավոր/

Պատասխան /Հարց 1/ 6 միավոր

«Հ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար»:

Խնդրի փաստերի համաձայն Նիկողոսյանը, իր համակարգիչը հանձնելով «Հզոր Համակարգիչ» խանութ սրահին, ակնկալել է, որ դրա հզորությունը կավելանա, ինչն էլ իր հերթին անհրաժեշտ էր հաշվապահական հաշվառման ծրագիրը արդյունավետ գործարկելու համար: Նիկողոսյանի և «Հզոր Համակարգիչ» խանութ սրահի միջև այս կապակցությամբ ծագել են ծառայությունների վճարովի մատուցման հարաբերություններ:

Համակարգչի հզորացման ուղղությամբ կատարվող գործողությունները պետք է դիտարկել ծառայությունների մատուցման համատեքստում, քանի որ խանութ սրահի կողմից պետք է ձեռնարկվեին այնպիսի միջոցառումներ, որոնց արդյունքում համակարգիչը կհզորանար, և այդ գործողությունների արդյունքում չէր ստեղծվելու որևէ առարկայացված արդյունք:

Նիկողոսյանի պնդումն այն մասին, որ իրեն՝ որպես սպառողի, ճիշտ տեղեկություն չի տրամադրվել, անհիմն է, քանի որ չնայած համակարգիչը վերջինիս անձնական տեխնիկան էր, բայց դրա հզորացման ծառայության ձեռքբերման նպատակը կապված չի եղել անձնական օգտագործման հետ, հետևաբար այս պարագայում Նիկողոսյանը չէր կարող հանդես գալ սպառողի կարգավիճակում:

Պայմանագրի գրավոր ձևի բացակայություն.

«Հ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կնքվում է գրավոր»:

Իր հերթին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն .

«1. Գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից:

2. *Օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության»:*

Նշված հոդվածների համադրված վերլուծությունից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ օրենսդրի կողմից պայմանագրի տվյալ ձևի համար սահմանված է գրավոր ձև՝ առանց ձևը չպահպանելու հետևանքները նշելու, ապա գործում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մասի կանոնը: Վերը նշված իրավական հետևանքը կիրառվում է բացառապես վեճի առկայության դեպքում: Այսինքն՝ այն դեպքերում, երբ տվյալ գործարքը կնքված լինելու փաստը կողմերի կողմից չի վիճարկվում, ապա գործարքի հասարակ գրավոր ձևը պահպանված չլինելու հանգամանքն ինքնին որևէ իրավական հետևանքներ չի առաջացնում¹:

Խնդրի փաստերից բխում է, որ և՛ Խանութ սրահը և՛ Նիկողոսյանը ընդունել են ծառայությունների վճարովի մատուցման կապակցությամբ միմյանց հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելու հանգամանքը, վերջիններիս միջև այս կապակցությամբ վեճ առկա չի եղել, հետևաբար այս պարագայում ծառայությունների վճարովի մատուցման գրավոր ձևը չպահպանելը ինքնին որևէ իրավական հետևանք չի կարող առաջացնել: Ըստ այդմ, պետք է նշել, որ անհիմն է Խանութ սրահի իրավաբանի այն պնդումը, որ գրավոր պայմանագրի բացակայության պարագայում իրենք որևէ պատասխանատվություն չեն կարող ստանձնել: Հարկ է նաև նշել, որ Նիկողոսյանի կնոջ՝ որպես վկա ցուցմունք տալու՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արգելքը այս պարագայում կիրառելի չէ, իսկ ցուցմունք տալու անհրաժեշտությունը իր հերթին բացակայում է, քանի որ կողմերը չեն վիճարկել գործարքի կնքված լինելու փաստը:

Պատասխան /Հարց 2/ 6 միավոր

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով»:

Նշված հոդվածից բխում է, որ ծառայությունների վճարովի մատուցման դեպքում պատվիրատուն ցանկացած պահի կարող է հրաժարվել պայմանագիրը կատարելուց, սակայն պարտավոր է հատուցել կատարողի փաստացի կատարած ծախսերը: Խանութ սրահի կողմից համակարգչի հզորացման համար ձեռքբերված միկրոսխեմայի արժեքը՝ 20 հազար ՀՀ դրամը տվյալ պարագայում պետք է դիտարկել

¹ Տե՛ս օրինակ ՀՀ վճարելի դատարանի Ե ԿԴ/0556/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

որպես կատարողի փաստացի կատարած ծախս, հետևաբար Նիկողոսյանը պարտավոր է վճարել 20 հազար ՀՀ դրամը:

Իր հերթին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 781-րդ հոդվածի համաձայն

«Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի նկատմամբ կիրառվում են կապալի մասին ընդհանուր դրույթները (հոդվածներ 700-727) և կենցաղային կապալի մասին դրույթները (հոդվածներ 728-737), եթե դա չի հակասում սույն օրենսգրքի 777-780 հոդվածներին, ինչպես նաև ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի առանձնահատկություններին»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 710-րդ հոդվածի համաձայն.

«Կապալի պայմանագրի կատարման կապակցությամբ՝ կապալառուին հասանելիք սահմանված գինը կամ այլ գումարը վճարելու պարտականությունը պարտավորաբար կողմից չկատարվելու դեպքում կապալառուն, սույն օրենսգրքի 373 և 374 հոդվածներին համապատասխան, իրավունք ունի պահել աշխատանքի արդյունքը, ինչպես նաև գույքի մշակման (վերամշակման) համար իրեն հանձնված՝ պարտավորաբար պարկանող սարքավորումները, չօգտագործած նյութերի մնացորդները և իր մոտ գտնվող՝ պարտավորաբար այլ գույքը մինչև պարտավորաբար կողմից համապատասխան գումարը վճարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 781-րդ հոդվածից բխում է, որ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի նկատմամբ հավասարապես կիրառելի են նաև կապալի մասին ընդհանուր դրույթները, եթե դրանք չեն հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի կարգավորմանն ուղղված նորմերին և պայմանագրի առանձնահատկություններին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 710-րդ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն իր էությամբ չի հակասում ո՛չ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի դրույթներին, ո՛չ էլ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի առանձնահատկություններին: Հետևաբար, Խանութ Սրահը կարող էր պահել համակարգիչը՝ մինչև Նիկողոսյանը չփոխհատուցեր Խանութին հասանելիք ծախսերը՝ այս պարագայում 20 հազար ՀՀ դրամը:

Ինչ վերաբերում է Նիկողոսյանի այն պնդմանը, որ իրեն Խանութի կողմից հավաստի տեղեկություն չի տրամադրվել, ապա հարկ է նշել, որ միայն ծրագրավորող բարեկամի կողմից ներկայացված պնդումը բավարար չէ միանշանակ պնդելու, որ Խանութ սրահի կողմից իրեն հավաստի տեղեկություն չի տրամադրվել: Բացի այդ, հարկ է անդրադարձ կատարել նաև այն հարցին, թե օրենսդրությամբ տեղեկություն տրամադրելու առումով ինչ պահանջ է առաջադրվում կատարողին:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի դրույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված

գլխում բացակայում է հատուկ նորմ ուղղված այս հարցի կարգավորմանը: Ուստի հարկ է պարզել, թե կենցաղային կապալի պայմանագրի և կապալի մասին ընդհանուր դրույթներից ո՞ր նորմը կարող է իր էությամբ կիրառելի համարվել խնդրո առարկա դեպքում:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 730-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն

1. Կապալառուն, մինչև կենցաղային կապալի պայմանագիր կնքելը, պարտավոր է պարտվիրատուին անհրաժեշտ և հավաստի տեղեկատվություն տրամադրել առաջարկվող աշխատանքի, դրա տեսակների ու առանձնահատկությունների, գնի և վճարման ձևի մասին, ինչպես նաև պարտվիրատուի ցանկությամբ նրան հաղորդել պայմանագրին ու համապատասխան աշխատանքին վերաբերող այլ տեղեկություններ: Եթե ըստ աշխատանքի բնույթի դա նշանակություն ունի, ապա կապալառուն պետք է նշի աշխատանքը կատարող կոնկրետ անձին:

Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 724-րդ հոդվածի համաձայն.

«Կապալառուն պարտավոր է աշխատանքի արդյունքը հանձնելու հետ մեկտեղ պարտվիրատուին տեղեկատվություն հաղորդել կապալի պայմանագրի առարկայի շահագործման կամ այլ օգտագործման վերաբերյալ, եթե դա նախատեսված է պայմանագրով, կամ տեղեկատվության բնույթն այնպիսին է, որ առանց դրա անհնար է աշխատանքի արդյունքն օգտագործել պայմանագրում նշված նպատակների համար»:

Հաշվի առնելով այն, որ համակարգիչը Նիկողոսյանը հանձնել է խանութին հետագայում իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության շրջանակում այն օգտագործելու նպատակով, պետք է նշել, որ այս պարագայում կենցաղային կապալի հարաբերությունների կարգավորմանն ուղղված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 730-րդ հոդվածի 1-ին մասը չի կարող կիրառելի համարվել: Այսինքն՝ տեղեկություն տրամադրելու հարաբերությունների նկատմամբ կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 724-րդ հոդվածը, որից բխում է, որ կատարողը պետք է տեղեկություն հաղորդի միայն այն պարագայում, եթե դա նախատեսված է պայմանագրով կամ առանց այդ տեղեկության տրամադրման անհնար կլինի օգտագործել համակարգիչը, ինչպիսի իրավիճակը խնդրո պարագայում բացակայել է:

ԲԱԺԻՆ Բ. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Խնդիր 2. /12 միավոր/

Պատասխան /Հարց 1/ 6 միավոր

Առաջին փաստը, որ պետք է պարզել՝ արդյոք այստեղ կնքվել է գործարք: Գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն: Դրանք իրավաբանական փաստի տեսակ են: Տվյալ դեպքում առկա է քաղաքացիների գործողություն՝ համաձայնություն, որով վերջիններս առաջացրել են փոխադարձ իրավունքներ և պարտականություններ՝ Արմենը պարտավորվել է Գևորգին վճարել 100 000 ՀՀ դրամ և փոխանցել նամականիշերը, իսկ Գևորգը պարտավորվել է Արմենին փոխանցել զարդը: Սրանով իսկ կարելի է փաստել, որ առկա է գործարք որպես իրավաբանական փաստ:

Արմենը փաստացի ցանկանում է վերացնել գործարքի իրավաբանական հետևանքը, այն է՝ անվավեր ճանաչել գործարքը: Գործարքի անվավերության հարցը քննարկելու համար պետք է պարզել՝ արդյոք գործարքը բավարարում է վավերության պայմաններին: Վավերության պայմանները չորսն են՝ սուբյեկտներին, ձևին, բովանդակությանը և կամահայտնությանը վերաբերող:

Սուբյեկտների պայմանի խախտում չկա: Խնդրում առկա չէ որևէ հիշատակում, որ կողմերն անչափահաս են կամ առկա է նրանց գործունակության սահմանափակում: Գևորգը հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր, ուստի այդ առումով էլ առկա չէ արատ:

Ձևի պայմանի խախտում նույնպես չկա: Գործարքը պետք է կնքվի գրավոր, եթե քաղաքացիների միջև կնքված գործարքի արժեքը գերազանցում աշխատավարձի սահմանված նվազագույն չափի քսանապատիկ գումարը: Տվյալ դեպքում ՀԴՄ կտրոնի տրամադրումը համարվում է պայմանագրի պատշաճ ձևով կնքում: Այնուամենայնիվ, քանի որ գործարքը կատարվել է, կնքման պահին, այն կարող էր կնքվել նույնիսկ բանավոր:

Գործարքի բովանդակությունը նույնպես չի հակասում ՀՀ օրենսդրությանը: Արգելք չկա, որպեսզի քաղաքացիները կնքեն զարդերի առուվաճառքի պայմանագիր՝ ոսկյա և արծաթե զարդերի շրջանառությունն արգելված և սահմանափակված չէ:

Միակ պայմանը, որի վերաբերյալ նախնական կարելի է պնդել, որ առկա

է արատ, կամահայտնությունն է: Կամքն անձի ներքին վերաբերմունքն է որոշակի երևույթի նկատմամբ: Կամահայտնությունն այդ վերաբերմունքի արտահայտումն է: Սովորաբար այս երկուսի միջև հակասություն չի լինում: Բայց այդպիսինի առկայության պարագայում օրենսդիրը հիմնականում արժևորում է կամահայտնությունը: Սակայն, երբեմն օրենսդիրը առավելություն է տալիս կամքին: Այդ դեպքերը նկարագրված են նաև քաղաքացիական օրենսգրքի 312-րդ և 313-րդ հոդվածներում:

Տվյալ դեպքում կարելի է խոսել կամ խաբեության կամ էական մոլորության մասին: Խաբեության դեպքում կամքի և կամահայտնության միջև խզումը ի հայտ է գալիս գործարքի կողմերից մեկի դիտավորյալ և ակտիվ գործողությունների հետևանքով: Այդ գործողություններով կողմը պետք է ցանկանա մյուս կողմի մոտ ստեղծել որոշակի երևույթի վերաբերյալ սխալ պատկերացում: Այս իրավիճակում չկա որևէ փաստ, որ Գևորգը խաբել է Արմենին, հետևաբար այս հիմքով անվավերության մասին չի կարելի խոսել:

Էական նշանակություն ունեցող մոլորության պարագայում առկա չէ կողմերից մեկի դիտավորյալ և ակտիվ գործողություն, որն ուղղված է մյուս կողմին խաբելուն: Սխալ պատկերացումն ի հայտ է գալիս մյուս կողմից դիտավորության բացակայության պայմաններում:

Էական նշանակություն ունի գործարքի բնույթի կամ դրա առարկայի այնպիսի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը, որոնք զգալիորեն պակասեցնում են այն ըստ նշանակության օգտագործելու հնարավորությունները: Գործարքի շարժառիթների վերաբերյալ մոլորությունն էական նշանակություն չունի:

Այսինքն, որպեսզի գործարքը անվավեր ճանաչվի, պետք է առկա լինի 1. էական մոլորություն, 2. որը զգալիորեն կպակասեցնի առարկան ըստ նշանակության օգտագործելու հնարավորությունը:

«Վճռաբեկ դատարանն իր որոշումներով արձանագրել է, որ էական նշանակություն ունեցող մոլորությունն առկա է, երբ կնքված գործարքը չի արտահայտում կողմերի իրական կամքը, չի կարող հանգեցնել այն իրավական հետևանքներին, որոնք նրանք ի նկատի են ունեցել գործարքի կնքման պահին: Էական նշանակություն ունի գործարքի բնույթի, մասնավորապես՝ գործարքի էության, դրա հետևանքների, կողմերի հարաբերությունների բովանդակության վերաբերյալ մոլորությունը: Գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը նշանակում է, որ կողմերը կամ նրանցից մեկը նկատի է ունեցել ոչ այն առարկան, որին վերաբերում է կնքված գործարքը, այլ իր հատկանիշներով տարբերվող մեկ այլ առարկա: Տվյալ դեպքում Արմենը ցանկացել է գնել հենց ոսկե զարդ, ինչը հստակ հիմնավորվում է զարմուհուն տրված խոստումով: Ուստի առկա է մոլորություն գործարքի առարկայի հատկանիշների վերաբերյալ:

Այդ էական նշանակություն ունեցող մոլորությունը պետք է նաև զգալիորեն պակասեցնի առարկան ըստ նշանակության օգտագործելու հնարավորությունը: Պերճանքի առարկայի դեպքում ըստ նշանակության օգտագործման հնարավորությունը պայմանավորված է դրա պարունակությամբ: Ոսկեջրած արծաթե առարկան չի կարելի օգտագործել որպես ոսկե առարկա:

Այսպիսով, հիմնավորվում է, որ առկա է էական նշանակություն ունեցող մոլորություն, հետևաբար առկա է գործարքի կամքի և կամահայտնության արատ և գործարքի անվավեր ճանաչման հիմք:

Գործարքի արատի առկայությունը դեռ չի նշանակում, որ այն ինքնըստինքյան անվավեր է: Գործարքն անվավեր է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք): Էական մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը վիճահարույց գործարք է: Այսինքն, անհրաժեշտ է դատարանի վճիռ, որով վերջինս կճանաչվի անվավեր:

Վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման հայց կարող է ներկայացնել միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նշված անձը, ի տարբերություն առոչինչ գործարքի, որի հետևանքների կիրառման հայց կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ: Էական մոլորության ազդեցության տակ կնքված գործարքի դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքը նշում է, որ այն կարող է անվավեր ճանաչվել մոլորության ազդեցության ներքո գործած կողմի հայցով: Արմենն այդպիսի անձ է, հետևաբար կարող է հայց ներկայացնել դատարան գործարքի անվավեր ճանաչման և դրա հետևանքների կիրառման համար:

Գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

Բացի դրանից, կողմը, որի հայցով գործարքն էական նշանակություն ունեցող մոլորության հիմքով անվավեր է ճանաչվել, իրավունք ունի մյուս կողմից պահանջել իրեն պատճառված իրական վնասի հատուցում, եթե ապացուցի, որ մոլորությունն առաջացել է մյուս կողմի մեղքով:

Մյուս կողմից, քանի որ մոլորության դեպքում առկա չէ կողմերից որևէ մեկի դիտավորյալ վարքագիծ, օրենսդիրը երբեմն հնարավորություն է տալիս կողմին մոլորության ազդեցության տակ գտնվող կողմից պահանջել վնասներ: Մասնավորապես, եթե ապացուցված չէ, որ մոլորությունն առաջացել է մոլորության

ազդեցության տակ չգտնվող կողմի մեղքով, կողմը, որի հայցով գործարքն անվավեր է ճանաչվել, պարտավոր է մյուս կողմի պահանջով հատուցել նրան պատճառված իրական վնասը, եթե անգամ մոլորությունը ծագել է մոլորված կողմից անկախ հանգամանքներում:

Գևորգը պնդում է, որ գործարքի ավավեր ճանաչվելու հետևանքով ինքը կկրի 300 000 ՀՀ դրամի վնաս: Այդ վնասը նա կկարողանա պահանջել, եթե հիմնավորի, որ մոլորությունը չի ծագել իր մեղքով:

Տվյալ դեպքում, կարելի է պնդել, որ մոլորությունը ծագել է Գևորգի մեղքով, քանի որ՝

1. Վերջինս իր խանութն անվանել է «Ոսկու աշխարհ»: Այսինքն, միջին սպառողը, ով չի հանդիսանում մասնագետ, կարող է մտածել, որ խանութում վաճառվում են հենց ոսկյա իրեր:

2. Զարդը տեղադրված էր այլ ոսկե առարկաների մեջտեղը: Այդ տեղադրվածությունը որոշել է հենց խանութի սեփականատեր Գևորգը: Միջին սպառողը զուտ այդ տեղադրվածությունից կարող էր հասկանալ, որ զարդը նույնպես ոսկուց է, այլապես այն դրված կլիներ առանձին:

3. Զարդի կողքը առկա չէր հատուկ նշում, որ այն ոսկեջրած արծաթից է: Հատուկ գիտելիքներ չունեցող ոչ մասնագետ սպառողը չի կարող տարբերել ոսկեջրած արծաթը ոսկուց: Գևորգը ձեռնարկատեր է, ուստի պետք է գործեր բարեխիղճ և տրամադրեր սպառողին ապրանքի վերաբերյալ հստակ տեղեկատվություն: Առավել ևս, երբ զարդի գինը 400 000 էր, ինչն արծաթե զարդի համար բավականին թանկ գին է, և իսկապես միջին սպառողը զուտ գնից կարող է եզրակացնել, որ այն ոսկուց է:

Քանի որ մոլորությունն ի հայտ է եկել Գևորգի մեղքով, վերջինս իրավունք չունի պահանջելու վնասների հատուցում գործարքի անվավեր ճանաչվելու դեպքում:

Պատասխան /Հարց 2/ 6 միավոր

Առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել դրա կատարման օրվանից տասը տարվա ընթացքում: Վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման մասին հայցը կարող է ներկայացվել, եթե գործարքը կնքվել է բռնության կամ սպառնալիքի ազդեցության տակ, դրա դադարման օրվանից (313 հոդվածի 1-ին կետ) կամ այն օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր

ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին:

Այսինքն, էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը կարող է անվավեր ճանաչվել այն օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, երբ հայցվորն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին:

Հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը: Ճիշտ է դրա ընդհանուր ժամկետը երեք տարի է, բայց օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ավելի կարճ կամ երկար հատուկ ժամկետներ, ինչպես վիճահարույց և առոչինչ գործարքների պարագայում:

Հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսում է այն պահից, երբ անձն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ գործարքն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին: Իհարկե, որոշ դեպքերում հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կարող է սկսել այլ պահից: Օրինակ, ինչպես նշվեց, առոչինչ գործարքի դեպքում հայցային վաղեմության ժամկետը սկսում է հոսել դրակատարման օրվանից:

Վիճահարույց գործարքների դեպքում կիրառվում է ընդհանուր կանոնը՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսում է այն պահից, երբ անձն իմացել էր կամ պարտավոր էր իմանալ իր իրավունքի խախտման մասին: Ճիշտ է Արմենը գործարքի անվավեր ճանաչելու համար հիմք ծառայող հանգամանքների մասին իմացել է 14.09.2017թ.-ին, երբ ստացել է փորձագետի եզրակացությունը, սակայն դա դեռ չի նշանակում, որ հայցային վաղեմության ժամկետը հոսելու է հենց այդ պահից: Հայցային վաղեմության ժամկետի ընթացքի համար կարևորվում է ոչ միայն այն պահը, երբ անձը փաստացի իմացել է իր իրավունքի խախտման մասին, այլև այն պահը, երբ վերջինս պարտավոր էր իմանալ:

Արմենը հենց 25.08.2016թ.-ին պարտավոր էր իմանալ, որ զարդն իրականում ոչ թե ոսկուց, այլ ոսկեջրած արծաթից էր, քանի որ Գևորգը փոխանցել էր նրան ՀԴՄ կտրոնը, որի վրա հստակ նշված էր առարկայի նկարագրությունը: Հետևաբար, 26.08.2016թ.-ից էլ պետք է հաշվարկել հայցային վաղեմության մեկ տարվա ժամկետը, որը կավարտվեր 26.08.2017թ.-ին: Հետևաբար, 14.09.2017թ.-ին հայցային վաղեմության ժամկետն արդեն անցել էր:

Սակայն դատարանն իրավունք չունի ինքնուրույն կիրառելու հայցային վաղեմությունը: Դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Եթե ապագա դատական քննության ընթացքում Գևորգը միջնորդի դատարանին կիրառել հայցային վաղեմություն, դատարանը պարտավոր կլինի մերժել հայցը:

20.09.2017թ.-ին Գևորգը պատասխանել է Արմենին՝ հայտնելով, որ

պատրաստ է վերադարձնել գումարը: Այս գործողությունը հնարավոր է գնահատել որպես հայցային վաղեմության ընդհատում: Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով, ինչպես նաև պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողությունները կատարելով: Ընդհատումից հետո հայցային վաղեմության ժամկետի ընթացքը նորից է սկսվում: Մինչև ընդհատումն անցած ժամանակը չի հաշվվում նոր ժամկետի մեջ:

Գևորգի 20.09.2017թ.-ի պատասխանն անշուշտ պարտքի ճանաչումը վկայող գործողություն է: Սակայն այդ գործողությունը կատարվել է հայցային վաղեմության ժամկետն անցնելուց հետո: Ընդհատման հիմք հանդիսացող գործողությունը պետք է կատարվի հայցային վաղեմության ժամկետի ընթացքում: Նույն դիրքորոշումն ունի նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընդհատման հիմք կարող է հանդիսանալ պարտավոր անձի այն գործողությունը, որը կատարվել է հայցային վաղեմության ժամկետում²:

Տվյալ դեպքում հայցային վաղեմության հնարավոր ընդհատման հիմք հանդիսացող գործողությունը կատարվել է հայցային վաղեմության ժամկետի լրանալուց հետո, հետևաբար հայցային վաղեմությունը չի ընդհատվել: Առկա չեն նաև հայցային վաղեմության կասեցման և վերականգման հիմքեր:

Գործարքը կարող է էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված լինելու հիմքով Արմենի հայցով անվավեր ճանաչվել: Քանի որ մոլորությունն առաջացել է Գևորգի մեղքով, գործարքի անվավեր ճանաչվելու դեպքում, վերջինս չի կարող պահանջել իրական վնասի հատուցում:

Սակայն տվյալ դեպքում անցել է նաև գործարքի անվավեր ճանաչման հայց ներկայացնելու համար նախատեսված վաղեմության մեկ տարվա ժամկետը, և եթե Գևորգը խնդրի դատարանին կիրառելու այն, հայցը կմերժվի:

Խնդիր 3. /12 միավոր/

Պատասխան /Հարց 1/ 6 միավոր

Խնդրի փաստական հանգամանքներից հետևում է, որ մի կողմից Լիանա Գրիգորյանի և X ՍՊԸ-ի, մյուս կողմից դարձյալ Լիանա Գրիգորյանի և Արթուր Գրիգորյանի և նորից Լիանա Գրիգորյանի և մոր միջև առաջացել են քաղաքացիական իրավահարաբերություններ:

Լիանայի և X ՍՊԸ-ի միջև առաջացած քաղաքացիական իրավահարաբերության ծագման հիմքը 4 ավտոմեքենաների առուվաճառքի պայմանագրերն են, Լիանայի և Արթուրի միջև առաջացած իրավահարաբերության ծագման հիմքը լիազորագիրն է, իսկ Լիանայի և մոր միջև՝ Արթուրին տրված լիազորագրի միջոցով կնքված 2 ավտոմեքենաների առուվաճառքի պայմանագրերը:

Նշված բոլոր քաղաքացիական իրավահարաբերությունների պարագայում էլ ծագման հիմքը գործարքներն են (<< քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետ):

<< քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ առաջացնելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն: Այսինքն՝ գործարքներն իրավաչափ իրավաբանական գործողություններ են:

Գործարքը կարող է վավեր համարվել և մասնակիցների համար առաջացնել ցանկալի իրավական հետևանքներ, եթե բավարարում է օրենքից բխող որոշակի պայմանների: Գործարքի վավերության պայմանները քաղաքացիական իրավունքի գիտության մեջ դասակարգվում են չորս տեսակի.

1. գործարքի սուբյեկտներին նորկայացվող պայմաններ,
2. գործարքի բովանդակության ներկայացվող պայմաններ,
3. սուբյեկտների կամահայտնությանը ներկայացվող պայմաններ,
4. գործարքի ձևին ներկայացվող պայմաններ:

Քննարկելով խնդրի փաստական հանգամանքները՝ կարելի է եզրակացնել, որ բոլոր 3 դեպքերում էլ սուբյեկտներին ներկայացվող պայմանները պահպանված են, քանի որ նրանց գործունակության վերաբերյալ առանձնահատուկ պայմաններ նշված չեն: Բովանդակության պարագայում նույնպես թերություններ չկան, քանի որ դրանք իրենց բովանդակությամբ չեն հակասում քաղաքացիական օրենսդրությանը¹: Գործարքների ձևի առնչությամբ նույնպես առանձնահատուկ պայմաններ նշված չեն, ուստի ենթադրում ենք, որ դրանց ձևին ներկայացվող պայմանները նույնպես

պահպանվել են:

Լիանայի տված լիազորագիրը այս պայմանին առերևույթ է բավարարում, քանի որ հետագայում խնդրի մյուս պայմանների վերլուծության արդյունքում կգանք այն հետևության, որ Լիանան այս գործարքի սուբյեկտ չէր կարող հանդիսանալ:

Այժմ անդրադառնանք գործարքի սուբյեկտների կամահայտնությանը ներկայացվող պայմաններին: Գործարքի վավերության համար անհրաժեշտ է, որ գործարք կնքող սուբյեկտն իր կամքն արտահայտի կամովին և ազատորեն առանց հակաիրավական կամ կամքի դրսևորման վրա անբարենպաստ ազդեցություն ունեցող արտաքին ազդակների: Այդ կամահայտնությունը պետք է համապատասխանի նրա իրական ցանկություններին՝ ներքին կամքին, արտահայտված լինի ոչ թե ձևականորեն, այլ իրավական հետևանքներ առաջացնելու նպատակով:

Նշվածի առնչությամբ քննարկենք յուրաքանչյուր գործարք առանձին-առանձին: Նախ անդրադառնանք Լիանայի և X ՍՊԸ-ի միջև կնքված 4 ավտոմեքնաների առուվաճառքի պայմանագրերին: Արթուրի այն փաստարկները, որ այդ մեքենաների իրական սեփականատերն ինքն է, իսկ քրոջ անունով դրանց ձևակերպումը կրել է ձևական բնույթ, ինչպես նաև, որ այդ պայմանագրերի կնքման նպատակով X ՍՊԸ-ի հետ բանակակցությունները վարել է Արթուրը, և վերջինս նաև հանդիսացել է այդ պայմանագրերով ծագած պարտականությունների կատարման երաշխավոր, վճարումները կատարել է անձամբ Արթուրը ու այդ մեքենաների փաստացի տիրապետումն ու օգտագործումն իրականացրել է Արթուրը, փաստում են այն մասին, որ տվյալ դեպքում առկա են շինծու գործարքի հատկանիշներ:

Օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն շինծու գործարքը, այսինքն՝ մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքը, առոչինչ է: Այդ գործարքի նկատմամբ, հաշվի առնելով դրա էությունը, կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել շինծու գործարքը կնքելիս:

«Վճռաբեկ դատարան իր մի շարք նախադեպային որոշումներում անդրադարձել է շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջների քննության առանձնահատկություններին: Մասնավորապես՝ «Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հիմքով առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման համար անհրաժեշտ է ապացուցել, որ՝

1. գործարքն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև, կամ

2. այն ստորագրած անձանց կամքը չի համապատասխանում պայմանագրում շարադրվածին: Այսինքն՝ շինծու գործարքն առկա է այն դեպքում, երբ կողմերի միջև իրականում ծագում են իրավահարաբերություններ, սակայն դրանք իրենց բնույթով այլ են, քան այն իրավահարաբերությունները, որոնք

կողմերը ցանկանում են ներկայացնել երրորդ անձանց (տե՛ս «Սինկրիստալ» ՍՊԸ-ն ընդդեմ Գազիկ Բղդոյանի և մյուսների թիվ 3-623(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, զարգացնելով վերը նշված դիրքորոշումը, նշել է, որ գրավոր գործարքների նկատմամբ շինծու լինելու հայցապահանջով ապացուցման առարկան կազմում են հետևյալ փաստերը.

- օրենքով սահմանված ձևին համապատասխանող գործարքի առկայությունը.

- այդ գործարքը վիճարկելու իրավունք ունենալը (շահագրգիռ անձ հանդիսանալը).

- գործարքը կնքելիս կողմերի իրական կամարտահայտությունը.

- վիճարկվող գործարքում նշված քաղաքացիական իրավահարաբերություններից տարբերվող՝ իրականում այլ քաղաքացիական իրավահարաբերությունների առկայությունը.

- կողմերի միջև իրականում առկա քաղաքացիական իրավահարաբերությունները վիճարկվող գործարքով քողարկելու նպատակի առկայությունը (տե՛ս Նունյա Առաքելյանն ընդդեմ Քնարիկ Մարտիրոսյանի և մյուսների թիվ ԵԱԲԴ/1299/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը շինծու գործարքի վերաբերյալ կայացրած որոշումներից մեկով արձանագրել է նաև, որ երկկողմ գործարքը կնքողներից միայն մեկ կողմի մոտ խաթարված կամքի առկայության դեպքում չի կարող այդ գործարքը գնահատվել շինծու, քանի որ նման փաստերի առկայությունը հնարավոր հիմք է տալիս հանգելու հետևության, որ հարցը վերաբերում է խաբեությանը կնքված գործարքին (վիճահարույց գործարք), որի համար օրենսդիրը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդված) սահմանել է անվավեր ճանաչելու այլ հիմքեր և դրանից բխող հետևանքներ (տե՛ս, Հասմիկ Բլուրցյանն ընդդեմ Վահե Այվազյանի և մյուսների թիվ 3-793 (ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.05.2007 թվականի որոշումը):

Խնդրի փաստական հանգամանքներից երևում է, որ Լիանայի և X ՍՊԸ-ի միջև 4 ավտոմեքենաների առուվաճառքի պայմանագրերը շինծու գործարքներ են, քանի որ իրականում կնքվել են ոչ այն ստորագրած անձանց միջև, մեքենաների իրական գնորդը ոչ թե Լիանան է, այլ Արթուրը: Բացի այդ այն հանգամանքը, որ պայմանագիրը կնքելու նպատակով իրականացվող բանակցություններին մասնակցել է Արթուրը, ով հանդես է եկել նաև այդ պայմանագրով պարտավորությունների կատարման երաշխավոր, ով կատարել է նաև բոլոր վճարումները, հիմք են տալիս եզրակացնելու, որ պայմանագրի մյուս կողմ իրականում գիտակցել է, որ մեքենաների իրական սեփականատերը ոչ թե Լիանան

է այլ Արթուրը: Իսկ Արթուրը Օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն իրավունք ունի դիմելու դատարան, քանի որ նշված հոդվածով նախատեսված է, որ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ: Իսկ Արթուրն անշուշտ շահագրգիռ անձ է:

Ինչպես նշեցինք շինծու գործարքներն առոչինչ են, իսկ Օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դրանք չեն հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառության այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքներն անվավեր են կնքելու պահից: Իսկ շինծու գործարքի պարագայում անվավերության հետևանքն այն է, որ դրա նկատմամբ պետք է կիրառվեն այն գործարքին վերաբերող կանոնները, որը կողմերն իրականում նկատի են ունեցել: Այսինքն, տվյալ պարագայում ավտոմեքենաների իրական սեփականատեր պետք է ճանաչվի Արթուրը:

Պատասխան /Հարց 2/ 6 միավոր

Այժմ անդրադառնանք Լիանայի կողմից Արթուրին տրված լիազորագրին: Այս պարագայում մենք գործ ունենք ներկայացուցչության ինստիտուտի հետ: Օրենսգրքի 318-րդ հոդվածի համաձայն՝ մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում անմիջականորեն ներկայացուցչի համար: Ինչպես տեսանք ներկայացուցչությունն իրականացվում է նաև լիազորագրի հիման վրա: Իսկ Օրենսգրքի 321-րդ հոդվածի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձնց առջև ներկայացվելու համար: Այսինքն լիազորագրի՝ որպես միակողմ գործարքի վավերության բոլոր պայմանները՝ այդ թվում սուբյեկտների կամահայտնությանը վերաբերող պայմանները նույնպես պահպանված են, ուստի այն ևս վավեր գործարք է:

Անդրադառնանք Լիանայի տված լիազորագրի հիման վրա Արթուրի և նրա մոր միջև կնքված գործարքին: Նախ նշենք, որ մերձավոր ազգականի հետ ներկայացուցչի՝ գործարք կնքելու իրավասության հետ կապված օրենքը արգելքներ չի նախատեսում, ուստի Արթուրն իրավունք ունի իր մոր հետ գործարք կնքել: Սակայն ինչպես երևում է խնդրի փաստական հանգամանքներից, գործարքը կնքելուց հետո մեքենաների շահագուրծումը շարունակել է իրականացնել Արթուրը, բացի այդ մեքենաներն օտարվել են շուկայականից երկու անգամ ցածր գնով, բացի այդ գործարքները կնքվել են դատաքննության ընթացքում, երբ պարզ չի եղել գործի ելքը և մեքենաներից երկուսը Դավիթի սեփականությանն անցնելու վտանգ է եղել, ուստի կարող ենք եզրակացնել, որ այս մասով մենք գործ ունենք կեղծ գործարքի

հետ: Օրեսգրքի 306-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կեղծ, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, առոչինչ է: Կնքելով այսպիսի գործարք՝ կողմերը քաջ գիտակցում են նման գործարքով իրենց համար որևէ իրավունք կամ պարտականություն չի առաջանում: Ստեղծելով ինքնատիպ իրավաբանական շղարշ՝ կողմերը կարող են իրենց առջև դնել տարբեր նպատակներ: Այս կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, իր նախադեպային որոշումներից մեկում փորձելով բացահայտել կեղծ գործարքի իրավական բնույթը անդրադարձել հետևյալ հարցադրումներին.

1. ինչպիսի՞ն է կեղծ գործարքի կողմերի ներքին կամքի և արտահայտած կամահայտնության հարաբերակցությունը,
2. արդյո՞ք կեղծ գործարքի բոլոր կողմերի կամքը պետք է ուղղված լինի այդպիսի գործարքի կնքմանը,
3. արդյո՞ք գործարքի փաստացի կատարումն ինքնին արգելք է կեղծ գործարքի առկայությունը հաստատված համարելու համար,
4. որո՞նք են կեղծ գործարքի անվավերության հետևանքները:

Կեղծ գործարքներն առոչինչ համարելը պայմանավորված է նրանով, որ դրանցում իրականությունը խեղաթյուրվում է դիտավորյալ կերպով՝ բացասական ազդելով քաղաքացիական շրջանառության բարեխիղճ մասնակիցների շահերի վրա: Կեղծ գործարք կնքվում է այն դեպքում, երբ անհրաժեշտ է ստեղծել իրավահարաբերության առկայության պատրանք՝ քողարկելու համար գործարքի կնքման իրական շարժառիթները: Այլ կերպ ասած՝ կեղծ գործարքը ծառայում է որպես միջոց՝ գործարքին մասնակից չհանդիսացող երրորդ անձի համար իրականությունը դիտավորյալ խեղաթյուրելու համար (օրինակ՝ պարտավորության կատարումից խուսափելու համար գույքն առերևույթ օտարելը՝ պարտատիրոջ մոտ գույքի անբավարարության տպավորություն ստեղծելու համար):

Վճռաբեկ դատարանը գտել է, որ կեղծ գործարքը համարվում է կամքի արատով գործարք, քանի որ այն չի պարունակում գործարքի կողմերի նպատակադրված կամային ակտը՝ ներքին կամքը, ուղղված իրավունքների և պարտականությունների ծագմանը, փոփոխմանը կամ դադարմանը: Կեղծ գործարքի դեպքում կողմերը չունեն իրական նպատակ՝ կնքելու գործարք՝ իրավունքներ և պարտականություններ առաջացնելով, փոփոխելով կամ դադարեցնելով, նրանց իրական նպատակը իրավահարաբերության պատրանք ստեղծելն է՝ իրական կամքը թաքցնելու նպատակով:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ գործարքը կեղծ որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի գործարքի բոլոր կողմերի կամքն ուղղված լինի առերևույթ հարաբերության ծագման տպավորություն ստեղծելուն, հակառակ դեպքում, եթե գործարքի կողմերից միայն մեկն է նման նպատակ հետապնդում, ապա առկա կլինի

կամքի արատով այլ գործարք, քանի որ երկկողմ գործարքը համաձայնեցված կամքի արտահայտություն է, և եթե գործարքը ձևակերպվում է առանց

իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության, ապա դա չի կարող լինել միայն մեկ կողմի ցանկությունը:

Վճռաբեկ դատարանը ընդգծել է նաև, որ չնայած կեղծ գործարքի կողմերը ձևակերպվող գործարքի որևէ իրավական հետևանք փաստացի առաջացնելու մտադրություն չունեն, այդուհանդերձ, որպեսզի երրորդ անձինք հնարավորություն ունենան վստահելու կեղծ գործարքին, գործարքի կողմերը, որպես կանոն, ստեղծում են փաստացի հարաբերության առկայության պատրանք՝ այդ թվում ձևականորեն առաջացնելով այն հետևանքները, որոնք պետք է առաջանային, եթե կնքվեր իրական գործարք (այդ թվում նաև՝ գործարքից բխող իրավունքները պետական գրանցման ենթարկելով): Վերը շարադրվածը վերաբերում է ինչպես գործարքի ձևին, այնպես էլ՝ բովանդակությանը, կողմերին և դրսևորած կամահայտնությանը: Այլ կերպ ասած՝ ստեղծվում է տպավորություն, որ գործարքի բոլոր տարրերը պահպանված են: Ընդ որում, կեղծ գործարքը կարող է և փաստացի կատարված լինել (մասնակի կամ լրիվ), սակայն կատարման նպատակը նույնպես պատրանքն իրականությանը մոտեցնելը լինի՝ հետագայում, այդուհանդերձ, գործարքի իրավական հետևանքներն առաջացնելու ցանկություն չունենալով: Եվ հակառակը, հնարավոր է նաև գործարքը կատարված չլինի, սակայն իրականում չլինեն կեղծ գործարքի մյուս հատկանիշները, և տվյալ դեպքում առկա լինի միայն պարտավորության խախտում: Ուստի, միայն գործարքի կատարված լինելը կամ չլինելը չի կարող բացառել կեղծ գործարքի առկայությունը, և այդ հանգամանքը պետք է գնահատվի մյուս հանգամանքների համատեքստում (տե՛ս Ալբերտ Պետրոսյանի սնանկության գործով կառավարիչ Արսեն Չիտչյանն ընդդեմ «Նորովի» ՍՊԸ-ի թիվ ԿԴ1/0935/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի

22.07.2016 թվականի որոշումը):

Համադրելով Օրենսգրքի համապատասխան նորմն ու ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական գնահատականներն խնդրի փաստական հանգամանքների հետ գտնում ենք, որ Լիանայի լիազորագրի հիման վրա Արթուրի և իր մոր միջև կնքված գործարքը կեղծ գործարք է, քանի որ այն կնքվել է առանց իրավաբանական հետևանքներ առաջացնելու մտադրության (մեքենաների շահագործումը շարունակել է իրականացնել Արթուրը,) երկու կողմի դիտավորությունն էլ առկա է եղել կեղծ գործարք կնքելու հարցում, իսկ կեղծ գործարք կնքելու հեռահար նպատակը եղել է բացառել մեքենաների անցնելը Դավիթի սեփականության ներքո: Օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով: Այսինքն իրերի սովորական դասավորվածության դեպքում Արթուրի մայրը պետք է վերադարձնեք ավտոմեքենաները, իսկ Լիանան ստացված գումարը, բայց քանի որ Լիանան

այդ մեքենաների իրական սեփականատերը չի հանդիսացել, որովհետև գործ ունենք շինծու գործարքի հետ, իսկ շինծու գործարքը առոչինչ գործարք է, այսինքն անվավեր է կնքված լինելու պահից, ուստի Լիանան նման լիազորագիր տալու իրավունք չուներ: Ուստի չի պահպանվել գործարքի սուբյեկտին ներկայացվող պահանջը: Այսինքն, մեքենաների օտարման գործարքը անվավեր է միանգամից երկու հիմքով:

Տվյալ խնդրի փաստական հանգամանքների և վերը շարադրված իրավակարգավորման համադրման արդյունքում կարելի է եզրակացնել որ՝

1. Լիանայի և X ՍՊԸ-ի միջև կնքված գործարքը շինծու գործարք է, ուստի որպես գործարքի անվավերության հետևանք մեքենաների իրական սեփականատեր պետք է ճանաչել Արթուրին: Ուստի Արթուրի պահանջը իրավաչափ է:

2. Լիանայի լիազորագրի հիման վրա Արթուրի և մոր միջև կնքված գործարքը պետք է ճանաչվի կեղծ գործարք:

3. Լիանայի տված լիազորագիրը նույնպես անվավեր գործարք է:

4. Դավիթ Մարտիրոսյանի պահանջը իրավաչափ չէ, քանի որ մեքենաների իրական սեփականատերը Արթուրն է, այլ ոչ թե Լիանան:

Խնդիր 4. /12 միավոր/

Պատասխան /Հարց 1/ 6 միավոր

Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

2) արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.

Սույն հոդվածի երկրորդ մասով սահմանվում է՝

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 11-րդ կետերով նախատեսված հիմքերով որոշակի ժամկետով կամ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է այդ մասին աշխատողին ծանուցել սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետներում:

Իսկ 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է՝

Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան երկու ամիս առաջ:

Գործատուի պատճառաբանությունը իրավաչափ չէ, քանի որ օրենսգրքում հստակ սահմանվում է ,որ գործատուն վերոնշյալ հիմքով աշխատողի հետ

պայմանագիրը լուծելիս պետք է նախապես ծանուցի երկու ամիս առաջ: Հետևյալ պահանջը չկատարելու դեպքում գործատուն կենթարկվի պատասխանատվության Օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-ին մասի համաձայն.

սույն հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին և 111-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը:

գործատուի պարտավորությունները խնդրում մատնանշված փաստական հանգամանքների շրջանակներում սահմանափակվում են բացառապես ծանուցման ժամկետների առկայության դեպքում դրանց պահպանությամբ:

Ոչ: Նախ Օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է .

Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից:

Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու: Այս և գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ կարևոր դրույթներ է պարունակում Արամ Կարապետյան ընդդեմ Արմենտել ՓԲԸ-ի Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/0008/02/14 որոշումը(28-12-2015)

...ՀՀ վճռաբեկ դատարանը, վերը նշված նորմերը մեկնաբանելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ, հաշվի առնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջները, արձանագրում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուի նախաձեռնությամբ լուծելու համար անհրաժեշտ է մի շարք նախապայմանների միաժամանակյա առկայությունը, մասնավորապես՝

1. պայմանագիրը պետք է կնքված լինի անորոշ կամ որոշակի ժամկետով.
2. պայմանագրի լուծումը պետք է պայմանավորված լինի արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ.
3. պետք է կրճատված լինեն աշխատողների քանակը և (կամ) հաստիքները.
4. գործատուն իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում պետք է աշխատողին առաջարկած լինի նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը պետք է հրաժարված լինի առաջարկված աշխատանքից, կամ
5. գործատուի մոտ պետք է բացակայեն աշխատողին՝ նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին

համապատասխան այլ աշխատանք առաջարկելու հնարավորությունները: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ գործատուի մոտ միայն արտադրության ծավալների, տնտեսական պայմանների, տեխնոլոգիական պայմանների, աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխումը, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությունն ինքնին բավարար չէ աշխատողի հետ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը գործատուի կողմից լուծելու համար, եթե նշված հանգամանքները չեն հանգեցրել աշխատողների թվաքանակի կրճատմանը (տե՛ս, Արտակ Մուրադյանը, Հովհաննես Դերձակյանը, Սրբուհի Հարությունյանը, Սուրեն Թադևոսյանը և Եվգենիա Մանուկյանն ընդդեմ «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի թիվ ԵԿԴ/3613/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը):

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման առանձնահատկություններին անդրադառնալիս նշել է, որ գործատուն չի կարող աշխատողին առաջարկել ցանկացած աշխատանք, այլ պարտադիր պայման է համարվում, որ գործատուի մոտ առկա հնարավորությունների սահմաններում առաջարկված աշխատանքը համապատասխանի աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին: Միայն աշխատողի կողմից մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան առաջարկված աշխատանքից հրաժարումը կարող է հանգեցնել գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծմանը: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «մասնագիտական պատրաստվածություն» և «որակավորում» հասկացությունները պետք է առավել լայն մեկնաբանության առարկա դարձվեն՝ հաշվի առնելով նաև այնպիսի կարևոր հանգամանք, ինչպիսին է տվյալ աշխատողի նախկինում զբաղեցրած պաշտոնը, կատարած աշխատանքը: Նման եզրահանգման համար ՀՀ վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն, որ օրենքի վերոնշյալ հոդվածը նպատակ է հետապնդում պաշտպանության տակ առնելու աշխատողներին այն բոլոր դեպքերում, երբ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման, ինչպես նաև արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում համապատասխան աշխատողի կողմից զբաղեցրած պաշտոնի փոխարեն նույն գործատուի մոտ դեռևս առկա է (կամ առաջանում է) նախկինում կատարած աշխատանքին համարժեք որակավորում և մասնագիտական պատրաստվածություն պահանջող այլ աշխատանք (տե՛ս, Գայանե Դանիլովան ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/2378/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի որոշումը):

Իսնդրում նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով եզրակացնում են, որ գործատուն չի կատարել իր վերը նկարագրված պարտավորությունները:

Գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծման արգելքը սահմանված է Աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածով.

1. Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է՝

1) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերի.

2) աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում.

2.1) հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը.

2.2) երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ կետերով կետերով նախատեսված դեպքերի.

3) գործադուլ հայտարարելու մասին որոշումն ընդունելուց հետո և գործադուլի ընթացքում, եթե աշխատողն այդ գործադուլին մասնակցում է սույն օրենսգրքով սահմանված կարգով.

4) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աշխատողի վրա դրված պարտականությունների կատարման ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի

5) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, եթե, այդ դեպքերով պայմանավորված, աշխատողը չի ներկայացել աշխատանքի.

6) ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների չալանավորված տեղափոխման կամ չալանավորված տրամադրման ժամանակահատվածում, եթե մինչև տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով աշխատողը չի ներկայացել աշխատանքի:

2. Եթե աշխատողը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակահատվածների ավարտից հետո չի ներկայանում աշխատանքի, ապա գործատուն սույն գլխով նախատեսված հիմքերով կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը:

3. Կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման) հետևանքով աշխատանքային պայմանագիրը լուծելիս չեն կիրառվում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները

